Տ. ՍԵՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԱՐԻԲՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ ԽԱՉՎԵՐԱՑԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(12 սեպտեմբերի 2004 թ.)

Գոհություն Աստուծո, շնորհակալություն Վեհափառ Տիրոջ, որ այս Սուրբ Խորանին վրա իմ ձեռնադրութենես տասնվեց տարի հետո շնորհքը ստացա վերստին բարձրանալ այս սուրբ բեմը և պատարագել Տիրոջ սուրբ մարմինը: Ինձի համար մեծ ուրախություն է, անշուշտ, գտնվիլ հոգևոր տանս մեջ: Երուսաղեմ և Էջմիածին անբաժան Աթոռներ են իրարմն, կապված շատ խորունկ պատմական և քրիստոնեական ազգային ճշմարիտ սիրով: Ոչ մեկ թյուրիմացություն կամ դժվարություն կամ անփափագելի ձեռքեր չեն կրնար նսեմացնել մեր սերը, մեր հավատարմությունը, մեր հարգանքը հանդեպ Ս. Էջմիածնի, անոր գահակալին և անշուշտ Հայրենիքին հանդեպ: Ես հպարտ եմ այս արտահայտություններուս, որովհետև անոնք անկեղծ են և անկեղծ սրտե կբխին: Հավատարիմ ենք ու հավատարիմ կմնանք կենտրոնը եղող Ս. Էջմիածնին:

Այսօր Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին կտոնե տոնը Վերացման սուրբ խաչի, որը պատմական ճշմարտության վրա հիմնված է: 614 թվականին պարսիկները իրենց հզոր բանակներով խուժած են Երուսաղեմ՝ գրավելով զայն և քանդելով այն, ինչ որ կրնան քանդել, և սուրբ խաչափայտը, որ կգտնվեր Սուրբ Հարության տաճարի մեջ՝ Գողգոթա լեռան վրա, որպես անարգանք քրիստոնյա աշխարհին զայն գերի վերցուցած էին իրենց հետ՝ տանելով Դարսկաստան, նույնիսկ այդ օրվա Զաքարիա Պատրիարքը իրենց հետ գերի տանելով որպես անարգանք ամբողջ քրիստոնյա աշխարհին: Այդ շրջանին շատ զորավոր ըլլալով Դարսից պետությունը՝ քրիստոնյա թագավորներ չհամարձակեցան վերստին գրավելու սուրբ խաչը և բերելու իր պատկանած տեղը Գողգոթայի լեռան գագաթին:

Տասնչորս տարի անց Հերակլ կայսր բյուզանդացվոց անդրադարձավ իր այդ անարգական ընթացքին մեջ գտնվելուն, պարտված նկատելուն ինքզինքը, հավաքեց հսկա բանակ մը և հարձակեցավ պարսիկներու վրա, հաղթանակելով անոնց առավ Սուրբ Խաչը և զայն տարավ-տեղավորեց հոն, ուր որ կպատկաներ՝ Գողգոթայի սուրբ լեռան վրա: Բայց առ ի գիտություն ձեզի կրնամ հայտնել նաև, թե հետագային որպեսզի այսպիսի անպատվաբեր արարքներուն մեջ չգտնվին մարդիկ և սուրբ խաչը իրենց վրիժառության, իրենց անարգանքի առարկա չընեն, սուրբ Եկեղեցին որոշեց Տիրոջ խաչափայտը բաժանել կենտրոնական եկեղեցիներուն միջև և զայն որպես մասունք հիմա ամեն եկեղեցի կպահե այդ Սուրբ Խաչեն մասունք մը որպես անշուշտ Տիրոջ սրբություն եղած նշանը:

Սիրելի հավատացյալներ, խաչը, որ ամբողջ աշխարհի մարդկության ամենասարսափելի զենքերեն մեկն էր, որ կգործածվեր հանդեպ ավազակներու, ոճրագործներու, զանոնք ամենաստորին ձևով պատժելու միջոց մըն էր, զանոնք խաչափայտի վրա կախելու կամ գամելու: Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, որպես հասարակ ավազակ մը, քավ լիցի, բռնվեցավ իր թշնամիներուն կողմե, որովհետև ան ճշմարտությունն է, որ կխոսեր, ան եկած էր լույս

այս խավար աշխարհի մեջ, ան եկած էր փրկելու մարդկությունը մեղքի ճիրաններեն, բայց մարդիկ նախընտրեցին մնալ մեղքերու մեջ, նախընտրեցին մնալ, ապրիլ այնպես, ինչպես իրենք կապրեին, և ուզեցին լռեցնել ճշմարտությունը, ուզեցին մարել լույսը, բայց անոնք չկարողացան նույնիսկ իրենց ամենասրտորին միջոցին դիմելով, որ Լույսը, որ Տերը, Փրկիչը աշխարհին՝ որպես պարզ ավազակ մը, բարձրացուցին զայն խաչափայտին վրա, այն խաչափայտը, որ մարդիկ սոսկումով կդիտեին, այն խաչափայտը, որ մարդիկ կվախնային, մեր Տիրոջ փրկագործութենեն հետո այդ խաչը եղավ հաղթություն, փրկություն և ապավեն ամեն մեկ քրիստոնյայի համար, հավատացյալ, ճշմարիտ քրիստոնյայի: Պողոս առաքյալ կըսե՝ քավ լիցի, որ ես պարծենամ, այլ միայն խաչովն Քրիստոսի (Գաղ. Զ 14):

Այո, սիրելի հավատացյալ ժողովուրդ հայոց, պարզ խոսք չէ, որ մենք երբեմն կըսենք, կկրկնենք միայն: Հայ ժողովուրդը, հայ ազգը քրիստոնեությունը ընդունելեն հետո իր կյանքը, իր ճակատագիրը, իր ամբողջ ընթացքը միացուց իր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի՝ զայն առնելով օրինակ, ինքն ալ առավ խաչը ուսին և շատ դժվարին ժամանակներուն մեջ իսկ ան բնավ չհուսահատեցավ, ան բնավ չդրդնջեցավ իր ընտրած ճանապարհին համար, որովհետև հայ ժողովուրդը գիտակցաբար ընտրեց լույսը. պատահականություն չէր հայ ժողովուրդի քրիստոնեություն ընդունելը:

Մենք հայերս կրոնքը որպես շապիկ չառինք մեր վրա, ինչպես որ պատմությունը այդ կվկայե: Մենք մեր կյանքին գնովը պաշտպանեցինք զայն: Առաջին օրեն իսկ շրջապատված ըլլալով ոչ քրիստոնյա տերություններեն, առաջին փորձերնին եղած էր արդեն մեզ վերըստին դարձնել խավարի, այն խավարեն, որեն մենք ազատեցանք և որուն համար մենք վճարեցինք շատ ծանր, վճարեցինք մեր ազգին արյունը:

Մենք պետք է հավատարիմ մնանք այն խաչին, որ մեր նախնիքները իրենց սրտովը, իրենց հոգվովը, իրենց մարմնովը, իրենց ամեն ունեցած արժեքներովը պահպանեցին, պաշտպանեցին և անոնք մեզի հանձնեցին, որպեսզի մենք մեզմե հետո հաջորդ սերունդին նույն հպարտությամբ, նույն սրբությամբ, նույն մաքրությամբ հանձնենք՝ ըսելով. մենք այս ավանդը, այս սուրբ կրոնքը առինք մեր նախնիքներեն և նույն սրբությամբ, նույն հավատարմությամբ կհանձնենք ձեզի այս պատվավոր գործը, որպեսզի դուք շարունակեք:

Սիրելիներ, մի՛ մտածեք, որ Տերը մեզ լքած է: Մենք Տերը լքած ենք: Երբ կկանչեք՝ ուր էիր, Աստված, երբ կերգեք՝ ուր էիր, Աստված, Աստված հոն էր, Աստված հոս է, բայց մենք ուր էինք արդյոք մեր հավատքով: Ինչու չենք ըսեր, թե մենք հեռացած էինք Աստուծմե, մենք չէինք ճանչնար զԱստված, որովհետև աշխարհային ցանկություններ, աշխարհային շահեր, ավելի փայլուն կյանք, այսօր մեզ կհեռացնե Մայր Եկեղեցիեն: Ավելի քիչ մը փարթամ ապրելու համար կծախենք այն, ինչ որ ծախու չէ: Նախքան ուրիշը այպանելու, նախքան պայմանները այպանելու՝ անկեղծ ըլլանք իրար հետ, դեմ-դիմաց կենանք իրար և մեր խղճին հետ և ըսենք, թե ով է հանցավորը, որ մենք այս վիճակին մեջ ենք և ավելի լավ չենք կարող լինել:

Մենք ենք, սիրելիներ, այն ոչխարը, որ իր մսուրը կթողու, այն ոչխարը, որ ուրիշ հովիվներու ետևեն կերթա, այդ ոչխարը կրնա պարարտանալ, կրնան պարարտացնել զայն: Կպարարտացնեն ավելի ծախու միս ունենալու համար, կպարարտացնեն զայն մորթելու համար: Ձեր Մայր Եկեղեցիեն մի հեռանաք, սիրելի հավատացյալներ, որևէ մեկ գնով: Եթե

մեր մեջ կան, որոնք կհիշեն մեր ժողովրդի փառապալից օրերը, փասնհինգի ջարդը, որ ամբողջ քրիստոնյա անվանված և կարծված պետություններու պաղած աչքերուն առջև գործվեցավ և այսօր մոտ հարյուր տարի է, որ պիտի ըլլա և այսօր տակավին այդ քաղաքավար, քիչ մը ժողովրդային պիտի խոսիմ, փողկապով և կրթված մարդիկ այսօր չեն ընդունիլ, որ իրենք ալ մասնակցություն ունեին այդ կատարվածին:

Ուրեմն որուն պիտի հուսաս, ով սիրելի ժողովուրդ, որուն պիտի ապավինիս, եթե ոչ՝ դուն քեզի, քո Մայր Եկեղեցվույդ, քո ծնողքիդ, քեզ ծնողին: Ձեր ուժեն զատ ուրիշ ուժի մի հավատաք և մի վստահիք: Շահեր են, որ իրար մոտ կուգան, շահեր են, որ երբեմն կժպտին իրարու, բայց ճշմարտությունը այն է, որ մենք միայն իրարու կրնանք օգտակար ըլլալ, մենք միայն զիրար պետք է սիրենք: Երբ մենք զիրար չսիրենք, ինչպես կուզենք, որ օտարը մեզ սիրե:

Մեկ ժողովուրդ, մեկ Եկեղեցի, մեկ Հայրենիք: Ասոնք մեր շրթներեն որպես բառեր չէ, որ պետք է ելնեն, այլ մենք պետք է հավատանք այն խոսքերուն, որ մեր բերնեն կելնե և մեր սրտեն կբխի: Կարդացեք մեր պատմությունը, սիրելիներ, կարդացեք մեր պատմությունը, որ մեզի ավանդ թողված այս սրբությունները, մեզի ավանդ թողված Հայրենիքը պարզ բառերով չէ, որ մեր ձեռքը եկած է. փշե ճանապարհներ անցած են մեր նախնիքները՝ պահելու համար մեր Հայրենիքը և պահելու համար մեր Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին, և այսօր դուք անտարբերորեն մի վարվիք այն սրբություններուն, որոնց համար արյուն թափված է և հոգիներ նահատակված են:

Աս մարմինը որքանով ալ փարթամ ըլլա, աս մարմինը որքան որ ալ լավ զգեստավորված ըլլա, աս մարմինը որքան որ ալ հարուստ ըլլա, դուք ալ գիտեք, մենք ալ գիտենք, որ վերջավորությունը հող էր և պիտի դառնա հողին: Մարդուն հոգին է անմահ, մարդուն գործն է անմահ, մարդ կհիշվի իր գործովը, իր մաքուր գործովը և իր ապրած աստվածահաճո՝ որպես ընտրյալ հայ, ճշմարիտ հայ, հայրենասեր հայ: Ամեն բան հոս կմնա, սիրելիներ. աշխարհի էր և աշխարհեն առնվեցավ և աշխարհի կմնա, բացի հոգիեն, որ Աստված սրբությամբ՝ որպես Սուրբ Հոգի փչեց մեր մեջ: Այդ հոգին է, որ պետք է արժեվորեք, այդ հոգին է, որ պետք է փրկեք: Մահկանացու մարմնին հաճույքներուն համար անմահը մի զոհեք:

Այս Սուրբ Խաչի տոնի առթիվ ձեզի ամենքիդ կմաղթեմ, որ իրապես գիտնաք, որ հայ ժողովուրդը խաչապաշտ ժողովուրդ է: Երբեմն կհպարտանանք և կըսենք, թե մենք առաջին ազգն ենք, որ Քրիստոնեությունը ընդունած ենք: Այո, իսկապես հպարտություն է, բայց անոր փաստը կուզենք մենք, փաստեցեք, որ իսկապես մենք այդ առաջին ժողովուրդն ենք, այդ արժանի ժողովուրդն ենք և Քրիստոսով ապրելու իրավունք ունեցող ժողովուրդ ենք :

Թող սուրբ խաչը պահապան ըլլա մեր ամենքիս վրա, հավատարիմ մնացեք մեր ազգին, Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցվո, անոր ավանդություններուն, սրբություններուն և հայրենի անկախության պահպանությանը զոհվելու պատրաստ հայեր՝ի փառս Աստուծո և ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո և ի հաստատումն Հայաստան անկախ աշխարհի. ամեն: